

Թ. Ս. ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՏԱՐՐԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ԹՈՒՐԹԻԱՅՈՒՄ

Մինչև ռեսպուբլիկական իշխանության հաստատումը Թուրքիայում գոյություն չունեին կրթության միասնական սխեմա: Սուլթանական Թուրքիայում կրթությունը իրականացվում էր մզկիթներին կից տարրական դպրոցներում՝ «մեկտեբներում» և հոգևոր սեմինարներում՝ «մեդրեսեներում»:

Միայն XIX դարի կեսերին Թուրքիայում առաջին անգամ հիմնվեցին պետական տարրական դպրոցներ՝ «մեկտեբի Ռուշիդիե» և «ի դադիե»՝ պետական միջնակարգ դպրոցներ¹: Այս դպրոցների բացմամբ, որոնց թիվը, ի դեպ, շատ փոքր էր, երկրում դրվեց աշխարհիկ կրթության սկիզբը: Սակայն այդ չէր նշանակում ուսուցման մեթոդի լուրջ փոփոխում. նախկինի պես վերջինս բացահայտ սխոլաստիկ բնույթ էր կրում:

Մի սեփական չէ, որ Թուրքիայում փորձեր են կատարվել կրթության բնագավառում ռեֆորմներ անցկացնել: 1845 թվականին հրատարակված հատուկ օրենքը, որը նախատեսում էր ընդհանուր ձրի ուսուցում, սուլթանական Թուրքիայում չիրականացվեց: Նմանօրինակ փորձեր կատարվեցին երիտասարդ թուրքերի ժամանակ՝ 1910 և 1913 թվականներին:

Ազգային-ազատագրական պայքարի հաղթանակը Թուրքիայում նրա կառավարող շրջանների առջև, բնականաբար դրեց տոցիալական մի շարք խնդիրների լուծման անհրաժեշտությունը: Քեմալական կառավարությունը ոչնչացրեց սուլթանաթը, հռչակեց ռեսպուբլիկա և վերացրեց խալիֆաթը: Թուրքիայի ֆեոդալապետապետական հին կարգին փոխարինելու եկավ բուրժուական ռեսպուբլիկան:

¹ Lency M. I. Garnet, The Turkish people, London, 1905, p. 164.

Ինֆորմաներ անցկացվեցին նաև լուսավորության բնագավա-
ռում. դրանք թելադրվում էին մի շարք պատճառներով: Կապիտա-
լիստական հարաբերությունների արագ զարգացումը, արտադրու-
թյան ճյուղերի և գյուղատնտեսության ընդլայնումը առաջ էին քա-
շում ազգային մտավորական կադրեր՝ ինժեներներ, ճարտարապետ-
ներ, բարձրորակ տեխնիկներ և վարպետներ պատրաստելու ան-
հրաժեշտությունը:

Հին դպրոցը, ուր դասավանդումը կատարվում էր սխոլաստիկ
ծրագրերով, չէր կարող բավարարել թուրքական կառավարող դա-
սակարգին, առաջ էր եկել ամբողջ ժողովրդական կրթությունը վե-
րակառուցելու անհրաժեշտությունը: Պետք էր այնպիսի դպրոց,
որտեղ ուսուցումը կատարվեր ժամանակակից սիստեմով և մեծ
ուշադրություն դարձվեր հանրակրթական կարևոր առարկաներին:
1924 թվականի սահմանադրության 87-րդ հոդվածը «տարրական
կրթությունը բոլոր թուրքերի համար պարտադիր և ձեր»¹ հռչակեց:
Փակվեցին կրոնական դպրոցները՝ մեդրեսեները, դպրոցների ու-
սումնական ծրագրերից հանվեցին բոլոր այն առարկաները, որոնք
ուղղակի կապ ունեին մահմեդական կրոնի հետ: 1925 թ. դեկտեմ-
բրից հրատարակվեց դեմիշների միաբանությունը (օրդեն) վերացնելու
մասին: Այս միջոցառումները, անշուշտ, թուլացնում էին մահմե-
դական հոգևորականության ազդեցությունը:

1928 թ. մեջլիսը սահմանադրությունից հանեց այն կետը, որ
ասում էր, թե «Թուրքիայի պետական կրոնը հանդիսանում է իս-
լամը»: Մեջլիսի այդ որոշմամբ եկեղեցին անջատվեց պետություն-
ից: Կառավարության այս և մյուս վերափոխումները անպայման
առաջադիմական բնույթ էին կրում: Սակայն դրանք բոլորովին էլ
չէին խոսում այն մասին, թե քեմալականները կրոնի ազդեցությամբ
լրիվ վերացնելու վճռական կողմնակիցներ էին: Լուսավորության
մինիստրությունը շարունակում էր գյուղերի ծխական դպրոցների
համար կրոնական դասագրքեր հրատարակել: Մինչև 1933 թվականը
Ստամբուլի համալսարանում գործում էր աստվածաբանական ֆա-
կուլտետ, մի փաստ, որը վկայում է թուրքական կառավարության
անհետևողականության մասին:

1924 թվականին թուրքական մեջլիսը որոշում ընդունեց ամ-
բողջ երկրում կրթության միասնական սիստեմ ստեղծելու մասին:
Երկրի բոլոր ուսումնական հաստատությունները, այդ թվում նաև

¹ Düstur, cilt 26, 3 cu tertip. Ankara, 1945, s. 178.

օտարազդիւններինը, լրիվ անցնում էին լուսավորութեան միջոցառումներինը, լրիվ անցնում էին լուսավորութեան միջոցառումներինը, լրիվ անցնում էին լուսավորութեան միջոցառումներինը:

Լուսավորութեան ասպարեզում ռեսպուբլիկական կառավարութեան կարևոր միջոցառումներինը էր այբուբենի ռեֆորմը: Առաջնորդում էլ փորձեր էին կատարվել լատինական այբուբեն ընդունելու ուղղությամբ: Բայց մահմեդական հոգևորականությունը, որի ձեռքում էր գտնվում կրթութեան գործը, ինչպես նաև մտավորականութեան մի մասը դիմադրում էին: Նրանք գտնում էին, որ «լատինական այբուբենի ընդունումը թուրքական հին գրականութեան բոլոր գանձերը անհասկանալի կդառնան ապագա սերնդի համար, որ ղուրանն ու մզկիթների արձանագրությունները կարելի է գրել միմիայն արաբական տառերով»¹:

Բայց լատինական այբուբենի թշնամիների դիմադրութեանը կոտրվեց:

Լատինական այբուբենին անցնելու համար ոգևորող օրինակ ծառայեցին սովետական արևելյան ռեսպուբլիկաներում կատարված համանման ռեֆորմները:

1926 թ. մարտ ամսին Բաքվում տեղի ունեցավ թուրքագետների կոնգրես, որի որոշումները լատինական այբուբեն ընդունելու մասին կարևոր նշանակություն ունեցան: Վերադառնալով կոնգրեսին, թուրքական պատվիրակությունը, որի կազմում էին՝ Հուսեյին Ջադե Ալին, Գուլա Մեսարինեն և Քյուլիյուլու Ջագե Մեմեդ Ֆուսդան, հարց բարձրացրեց լատինական այբուբենը հետադուր ուղի հանձնաժողով ստեղծելու մասին:

1926 թվականի ամռանը Մոսկվա եկավ թուրքական մի այլ պատվիրակություն՝ ժողովրդական կրթութեան գործի կազմակերպմանը ծանոթանալու նպատակով: Վերադառնալով հայրենիք, առաջինի նման այս պատվիրակությունը ևս արտահայտվեց լատինական այբուբեն ընդունելու օգտին²:

Այս բոլորի հետևանքը եղավ այն, որ Թուրքիայի բարձրագույն ազգային ժողովը 1928 թ. նոյեմբերի 1-ին օրենք ընդունեց այբուբենի ռեֆորմի մասին:

Լուսավորութեան բնագավառի վերափոխումները և հատկապես այբուբենի ռեֆորմը դրական դեր խաղացին բնակչութեան գրագիտութեան մակարդակը բարձրացնելու գործում և ճանապարհ հար-

¹ ЦГАОР, фонд 4459, оп. 2, дело № 403, л. 139.

² Տե՛ս «Народное просвещение», 1926, № 8, էջ 128, *ինչպես նաև* «Новый Восток», 1926, № 13—14, էջ 457:

թեցին նրա մտավոր աճի համար: Մեծացավ ուսումնական հաստատությունների ցանցը, բացվեցին նոր բարձրագույն դպրոցներ: Ամենուրեք հիմնվեցին ուսուցչական դասընթացներ՝ նոր ալբուբենին և քերականությանը ծանոթանալու համար: 1928 թ. նոյեմբերի 20-ին շափահասների մեջ անգրագիտությունը վերացնելու համար կազմակերպվեցին ստացիոնար և շարժական դասընթացներ, որոնք կրում էին «ազգային դպրոցներ» անունը: Դպրոցների ընդհանուր ղեկավարությունը ստանձնել էր Թուրքիայի պրեզիդենտ Մ. Քեմալը: Նրան շնորհվեց «գլխավոր դասատուի» կոչում: 1928—1929 ուսումնական տարում արդեն գործում էին շուրջ 20.000 դասընթացներ՝ ավելի քան 1 միլիոն այցելուներով: Ազգային դպրոցները բաժանված էին երկու՝ «Ա» և «Բ» կուրսերի: «Ա»-ն գործում էր անգրագիտների, իսկ «Բ»-ն՝ արաբերեն ալբուբենը իմացողների համար: Նոր ալբուբենի հետ ծանոթանալուն զուգընթաց «Բ» կուրսերի ունկնդիրները սովորում էին նաև թվաբանություն, պատմություն, աշխարհագրություն:

Ուսման դասընթացը տևում է 2—4 ամիս: Ամեն մի դասարան շաբաթական ուներ 6 ժամ: Այդ դասարաններում սովորողների թիվը լինում էր 15—40 մարդ²: Անգրագիտության վերացման կամ պանիան ընթանում էր բավական արագ տեմպով: Այսպես, 1928—1929 ուսումնական տարում դասընթացներն անցնելու վկայագիր էր ստացել 500 հազար մարդ: Հետագա տարիներին սրանց թիվը պակասում է: 1949—1950 թվականներին, օրինակ, այն կազմեց 2738 մարդ³:

Բացի այդ դասընթացներից, 1932 թվականի փետրվարի 18-ին ստեղծվեցին այսպես կոչված «Ժողովրդական տները», որոնք փոխարինեցին «թուրքական օջախներին»⁴:

«Ժողովրդական տները» գործում էին մինչև 1951 թվականի օգոստոսի 8-ը և ունեին ավելի քան 1800 «Ա» խմբի և 600 «Բ» խմբի դպրոցներ: 1936—1949 թվականների միջև ընկած ժամանա-

² Tourkan Oguzkan, Adult Education in Turkey. UNESCO. Paris, 1955, № XIV, p. 18.

³ Նույն տեղում, էջ 19:

⁴ Türkiye İstatistik umum müdürlüğü, İstatistik yillığı, 1951, p. 212.

⁵ «Թուրքական օջախները» ստեղծվել էին դեռևս երիտասարդ թուրքերի օրոք՝ պանթուրքիզմի և պանթուրանիզմի պրոպագանդան նպատակով: Դրանք իրենց նշանակությունը պահպանել էին նաև ռեսպուբլիկական կարգերի օրոք: Սակայն մասսայականություն չունենալու պատճառով 1931 թ. քեմալիստները փակեցին դրանք:

կաշրջանում «ժողովրդական տները» այցելել էին ավելի քան 700.000 ունկնդիրներ¹։

«Ազդային դպրոցներն» ու «ժողովրդական տները» զգալիորեն նպաստեցին բնակչության գրագիտության մակարդակի բարձրացմանը։ Բայց Թուրքիայի ընդհանուր հետամնացության հետևանքով ժողովրդական մասսաների կրթական մակարդակի իսկական բարձրացում անդի շունեցավ։ Ծիշտ է լուսավորության բնագավառի վերափոխությունները նպաստում էին աշխարհիկ ուսուցումը ներդնելուն, սակայն կրթության մենաշնորհը հիմնականում մնաց ունեվոր դասակարգի ձեռքին և բանվորա-գյուղացիական զանգվածների կրթությունը սահմանափակվեց աննշան միևիմուտով։ Ահա թե ինչու անգրագիտության լրիվ վերացման խնդիրը Թուրքիայում այդպես էլ չլուծվեց։ 1950 թվականի վիճակագրական տվյալներով անգրագետները կազմում էին բնակչության 64,4%²։

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ Թուրքիայի կառավարող շրջանները երկիրը ներքաշելով իմպերիալիստական իրականության մեջ ուղղակիապես քաղաքականություն էին վարում, անգրագիտության վերացման ընթացքը զգալիորեն դանդաղեց։ 1958—1959 թվականների բյուջեում լուսավորության համար հատկացված էր 522,6 միլիոն լիր, այնինչ ուղղակի ծախսերի համար բաց էր թողնված 2,5 միլիարդ լիր³։ Թուրքական վիճակագրության 1955 թ. տվյալներով երկրի բնակչության 59,4%-ը անգրագետ էր⁴։ 1950 թվականի համեմատությամբ դա աննշան առաջընթաց էր, եթե նկատի ունենանք նաև բնակչության աճը այդ նույն ժամանակամիջոցում։

Այժմ Թուրքիայի ժողովրդական կրթության սիստեմը կառուցված է 1926 թվականի մարտի 22-ի օրենքի համապատասխան։ Ըստ այդ օրենքի երկու սեռի երեխաների համար էլ տարրական կրթությունը համարվում է պարտագիր։

Լուսավորության միևիմուտության պետական սիստեմը իր մեջ ընդգրկում է ընդհանուր մասնադիտական կրթության բոլոր օղակները։ Հարկ է նշել, որ լուսավորության սիստեմի վերակառուցման ժամանակ շատ բան ընդօրինակվեց եվրոպական երկրների դպրոցական օրենսդրություններից։ Համաշխարհային երկրորդ պատե-

¹ Türkiye İstatistik umum müdürlüğü, İstatistik yılı, 1951, p. 212.

² „Akşam“, 12.VI.1952.

³ „Ulus“, 3.XII.1952. Հաա պաշտոնական կուրսի ներկայումս 1 գուլ.—9,2 լիր—յի։

⁴ „Cumhuriyet“, 8.II.1957.

բազմից հետո զգալիորեն ուժեղացավ ամերիկյան ազդեցությունը, որով ԱՄՆ-ը ցանկանում էր ամրապնդել իր քաղաքական ու տնտեսական դիրքերը: 1949 թվականի դեկտեմբերի 27-ին Թուրքիայի և ԱՄՆ-ի միջև համաձայնագիր կնքվեց այսպես կոչված «Լուսավորության բնագավառում համագործակցելու մասին»: Այդ համաձայնագրի ոգով Թուրքիայի լուսավորության մինիստրությունը անցկացրեց ռեֆորմ, որը երկրի ուսումնական հաստատություններում մտցրեց կրթության ամերիկյան սիստեմ:

«Մեկ-երկու տարի հետո, — գրում է «Ենի Իստանբուլ» թերթը, — դպրոցներում ուսուցումը լրիվ չափով կատարվելու է ամերիկյան սիստեմով»¹, որն հանգում է «6—3—3» կարգին, ուր 6 տարին հատկացվում է նախնական դպրոցին, 3 տարին՝ «կրտսեր միջնակարգ դպրոցին» (junior highschool) և նույնքան էլ՝ «ավագ միջնակարգ դպրոցին» (senior high school): Այդ սիստեմը լայնորեն օգտագործվեց Թուրքիայում:

* * *

Թուրքիայում նախնական կրթությունը երկու սեռի երեխաների (7—12 տարեկան) համար էլ պարտադիր է և իրականացվում է քաղաքային ու գյուղական տարրական դպրոցներում: Առաջինները նորմալ տիպի տարրական դպրոցներ են՝ 5-ամյա դասընթացով և բաժանվում են երկու մասի. կրտսերի՝ 3 և ավագի՝ 2 տարվա տեղողությամբ: Գյուղական դպրոցները սովորաբար ունեն ուսուցման երեքամյա դասընթացներ: Տարրական դպրոցներում պարապմունքները սկսվում են հոկտեմբերի 1-ին²:

Ցածրաստիճան դպրոցների ուսումնական պլանների մեջ մշտնում են հետևյալ առարկաները՝ Թուրքերեն լեզու, ընթերցանություն, գրություն, թվաբանություն, երկրաչափություն, գծագրություն, երգեցողություն և ֆիզկուլտուրա: Բարձրաստիճան դպրոցը, նշվածներից բացի, անցնում է աշխարհագրություն, պատմություն, քաղաքացիական իրավունք: Քաղաքային տարրական դպրոցներում ուսումնական ժամերի քանակը շաբաթվա մեջ հավասար է 26-ի, իսկ յուրաքանչյուր ժամվա տեղողությունը՝ 40—50 րոպեի: Գյուղական դպրոցներում շաբաթվա մեջ ուսումնական ժամերի քանակը նկատելի չափով պակաս է՝ հավասար է 18-ի³:

¹ „Yeni Istanbul“, 14.XI.1952.

² „Vatan“, 2.XI.1956.

³ A bu l H. K. Sassani, Education in Turkey, Washington, 1952, p. 17.

Գյուղական տարրական դպրոցներում դասաժամերի կրճատումը բացատրվում է երեխաների զբաղվածությամբ ինչպես տնային, այնպես էլ դաշտային աշխատանքներում: Այդ է պատճառը, որ երեխաների զգալի մասը հազիվ գրել կարդալ սովորելով թողնում է դպրոցը: Երեխաների մեծամասնությունը չի կարողանում «դավել» նույնիսկ ուսման այս խղճուկ փշրանքներից, որովհետև ոչ բոլոր դպրոցներում դպրոց կա: Այժմ Թուրքիայում ավելի քան 35 հազար դպրոցից 17 հազարը դպրոց չունի¹:

Թեև 1952 թվականին Թուրքիայում հաշվվում էր 20773 տարրական դպրոց, բայց զգացվում էր դպրոցների այնպիսի պակաս, ինչպես 1935 թվականին, երբ այդ թիվը ընդամենը 6112 էր: Դա բացատրվում է նրանով, որ Թուրքիայում երեխաների թիվն աճում է ավելի արագ, քան դպրոցների ընդլայնումը: Այժմ այնտեղ 3,5 միլիոն երեխաներից 1,5 միլիոնը ուսուցումից դուրս է մնացել²: Նույնիսկ Ստամբուլի վիլայեթում, ուր վիճակագրական տվյալներով միայն 5 դպրոց չունեն դպրոցական շենքեր, 10 հազար գյուղական երեխաներ զրկված են դպրոց հաճախելու հնարավորությունից³:

Տարրական դպրոցների վիճակը մանավանդ անբավարար է արևելյան վիլայեթներում: Թուրքիայի ազդեցիկ թերթերից մեկը՝ «Վաթանը», խոսելով մեջլիսի նիստերի մասին, գրում է, թե դեպուտատ Ուրֆին (ԺԻՊ) իր ելույթում շեշտել է լուսավորության գործի վատ դրվածքը արևելյան վիլայեթներում⁴: Այստեղ ամեն տարի ավելանում է դպրոցից դուրս մնացած երեխաների թիվը: «Վան սեսի» թերթը հաղորդում է արևելյան վիլայեթներում նախնական դպրոցների լիակատար բացակայության մասին: Թերթի ասելով գրագետների տոկոսը ոչ միայն գյուղերում, այլև շրջկենտրոններում շատ ցածր է⁵: Նման վիճակ է տիրում նաև արևելյան այլ վիլայեթներում:

Այսպես Ագրի վիլայեթում, օրինակ, 570 գյուղերից դպրոցներ ունեն միայն 122-ը: Դպրոցական շենքերի պակասի հետևանքով 15.000 երեխաներ զրկված են դպրոց հաճախելու հնարավորու-

¹ „Forum“, 1.IV.1960, № 145, cilt XIII, s. 6.

² „Cumhuriyet“, 30.VII.1959.

³ „Aktis“, 30.XI.1959, № 257, s. 20.

⁴ „Vatan“, 11.I.1959.

⁵ „Van Sesi“, 17.III.1952 (տե՛ս Е. Саркисов, „Положение трудящихся масс в современной Турции“, стр. 136—137.

թյունից, Դիարբեքիում (վիլայեթում) 652 գյուղերից միայն 183-ում կան դպրոցներ, իսկ անգրագետ երեխաների թիվը հասնում է 28 հազարի²։

Այսպիսով, դպրոցական շենքերի անբավարարության հետևանքով ժամանակակից Թուրքիայում մեծացել է ուսուցման ցանցից զուրս մնացած երեխաների քանակը։ Եթե դպրոցների աճը ընթանա այժմյան տեմպերով, ապա ընդհանուր նախնական կրթության խնդիրը անտարակույս, կլուծվի միայն շատ տասնամյակներ հետո։

Թուրքական դպրոցը գտնվում է աղքատիկ վիճակում։ Դպրոցական շենքերը չեն վերանորոգվում։ Անգամ Ստամբուլում շատ դպրոցներ տեղավորված են սարայներում և պահեստաշենքերում։ Կոնյայի վիլայեթում 32 դպրոցական շենքեր խարխլված են և անհետաձգելի վերանորոգման կարիք են զգում³։ Գյուղական շատ դպրոցներ տեղավորված են կիսաքանդ շենքերում, ուսուցման համար բոլորովին անհարմար սենյակներում, որոնք հաճախ նույնիսկ պատուհաններ չունեն։ Նրանցից շատերը չեն լուսավորված և չեն տաքացվում։

Երկիրը ագրեսիվ բլոկների մեջ ներքաշող կառավարող շրջանները «ժամանակ չունեն» զբաղվելու դպրոցական գործով։ Ռազմական, կես միլիոնանոց բանակի պահպանման, բազաների կառուցման և նման այլ նպատակներով ծախսվում են հսկայական միջոցներ, մինչդեռ լուսավորությանը միայն աննշան գումարներ են հատկացվում։

1940—1955 թվականներին տարրական դպրոցների կարիքները համար հատկացվել է 1,5 միլիարդ լիր⁴, այսինքն գրեթե երկու անգամ պակաս, քան այն գումարը, որ միայն 1955 թվականին է թրվել ուղղակի ռազմական ծախսերին։ Լուսավորության կարիքներին տրվող հատկացումները գնալով կրճատվում են։ Այսպես, պետական բյուջեի քննարկման ժամանակ ժողովրդա-ռեսպուբլիկական պարտիայի դեպուտատ Թուրխան Ֆեյզիօղլուն ընդգծեց, որ լուսավորության մինիստրության կապիտալ շինարարության հատկացումները 1958 թ. նախորդ տարվա համեմատությամբ կրճատվել է 18 միլիոն լիրով⁵։

¹ „Aktis“, 30.VI.1959, № 257, s. 20.

² Նույն տեղում։

³ „Vatan“, 5.II.1953.

⁴ „Zafer“, 27.VII.1956.

⁵ „Ulus“, 1.III.1958.

Երևիսանների դպրոց չհաճախելու հիմնական պատճառներից մեկն էլ աշխատավոր զանգվածների նյութական ծանր դրությունն է: Ցածր աշխատավարձը աշխատավորների հսկայական մեծամասնությանը թույլ չի տալիս իր երեխաների ուսուցման ծախսերը հոգալ:

Թուրքական մամուլի տվյալներով մի աշակերտ պահելու ընդհանուր ծախսերը 1958 թվականին, 1957 թ. համեմատությամբ, 60%-ով աճել էին, 100%-ով բարձրացել էին առաջին անհրաժեշտության ապրանքների գները:

Այսպես, օրինակ՝ Թուրքական որոշ թերթեր հրապարակել էին հետևյալ տվյալները:

1957 թ.	1958 թ.
1 տետր 3 լիր	9 լիր
1 գրիչը 160 ղուրուշ	200 ղուրուշ
Դռնաներկեր 12 ղուրուշ	300 ղուրուշ ¹

Այսպիսով 1958 թ. մեկ աշակերտի վրա ծախսվում էր 626 լիր², Հետևապես, գյուղացին, որի տարեկան միջին եկամուտը 1000 լիրից չէր անցնում³, չէր կարող ձեռք բերել թեկուզ դպրոցական ամենաառհրաժեշտ պիտույքները:

Այսպիսի ծախսեր ի վիճակի չէր կատարելու Թուրքական աշխատավորությունը, որի ամսական աշխատավարձը, ինչպես 1957 թ. ապրիլին գրել է «Ուլուս» թերթը, տատանվում էր 180—200 լիրի միջև: Դրա համար էլ բոլորովին պատահական չէ, որ Թուրքիայի տարրական դպրոցներում նկատելի է սովորողների մեծ մաղում: Քաղաքներում դպրոցն ընդունված երեխաների միայն 67% է ավարտում 5 դասարան, իսկ գյուղերում 34%-ը⁴: Սովորողների մաղումը ավելի մեծ է աղջիկների մեջ: Սովորող աղջիկների թիվը քաղաքներում 25%-ով, իսկ գյուղերում՝ 37%-ով պակաս է տղաներից⁵:

Թողնելով դպրոցը, 16 տարեկանից փոքր հազարավոր երեխաներ աշխատում են երկրի արհեստանոցներում և ֆաբրիկաներում, վաստակելով խղճով կոպեկներ: «Սոն պոստա» թերթը նշում է, որ «...Թուրք երեխաների համար այլ ելք չկա, բացի մեռնելուց

¹ «Cümhuriyet», 11.IX.1958.

² «Ulus», 28.IX.1958.

³ «Vatan», 29.XII.1958.

⁴ «Ulus», 20.VI.1957.

⁵ Նույն տեղում:

կամ էլ՝ մի կտոր հացի համար ուժից վեր ստրկական աշխատանքից¹։ Նույն թերթը գրում է, թե չհաշված գաղութային երկրները, երեխաների աշխատանքի շահագործմամբ Թուրքիան ռեկորդ է խփել։ Թուրքական իշխանությունները չեն կատարում անշահաճանեների աշխատանքի մասին միջազգային կոդեքսի պահպանումը²։

Հազարավոր թուրք երեխաներ, չկարողանալով աշխատանք ճարել, մնում են բախտի քմահաճույքին։ Նրանք զբաղվում են գողություններով, ողորմություն են խնդրում, քարշ են գալիս շուկաներում։ Միայն Ստամբուլում, «Ջումհուրիեթ» թերթի հաղորդմամբ, 1958 թվականի հունվարին գրանցված էին դպրոցական հասակի 15 հազար անապաստան երեխաներ³։ Եվ իզուր չէ, որ թուրքական նախկին մայրաքաղաքը «դժբախտ երեխաների քաղաք» համբավն է վայելում⁴։

Հատուկ հանձնաժողովի տվյալներով անապաստանների թիվը երկրում հավասար է 250—300 հազարի, որոնցից դաստիարակություն են վերցված ընդամենը 4000 անապաստաններ⁵։ Դժբախտ այս երեխաների ճակատագիրը ամենևին չի անհանգստացնում Թուրքիայի կառավարող շրջաններին։ «Ուլուս» թերթը դառնություններ գրում էր. «Ցավալի է գիտակցել, որ մեր հասարակությունը սովորել է տեսնել թշվառ, աղքատ և անապաստան երեխաներ, որոնց լքել են մայրերը, վաճառել են հայրերը, որոնք արհեստականորեն դարձել են շուկաներում ողորմություն աղերսող հաշմանդամ թափառաշրջիկներ,—այսպիսի հաղորդումները սովորական են մեր թերթերի էջերում»⁶։

Անհրաժեշտ քանակի մանկավարժական կադրերի բացակայությունը տարրական կրթության սիստեմի առաջ ժառանգած խնդիրներից է։ Պաշտոնական տվյալներով ընդհանուր տարրական կրթություն մտցնելու համար անհրաժեշտ են 60 հազար մանկավարժներ⁷։ Ինչպես թուրքական մամուլն էր հաղորդում, ուսուցիչների պակասի պատճառով երկրի շատ դպրոցներում դասերը 1958 թ. չէին սկսվել, մի շարք դպրոցներ էլ փակվել էին։ Կոնյայի վիլայեթում, օրինակ, 50 դպրոցներ չէին կարողացել իրենց պարապմունքները

¹ «Akşam», 8.IX.1959.

² Կապիտալիստական երկրների մեծամասնությունում պաշտոնապես արգելված է մինչև 14 տարեկան հասակի երեխաների աշխատանքը։

³ «Cümhuriyet», 10.I.1958.

⁴ «Yeni ışık», 12.VI.1954.

⁵ «Ulus», 23.IV.1957.

⁶ Նույն տեղում։

⁷ «Cümhuriyet», 28.VIII.1959.

սկսել¹։ Անկարայի վիլայեթում նույն պատճառով 1959 թ. 69 գյուղական դպրոցներ փակվեցին²։

1957 թվականի հունվարին «Հյուրիեթ» թերթը հոգված հրատարակեց «Պահանջները շատ են, իսկ ուսուցիչները՝ քիչ» բնորոշ վերաբերմամբ։ Նրա հեղինակը հայտնում էր, որ եթե մոտիկ ապագայում ուսուցիչների պատրաստման բնագավառում վճռական միջոցներ չձեռնարկվեն, «ապա ուսուցիչների նկատմամբ երկրի պահանջները կբավարարվեն միայն 70 տարի հետո»։

Իրենք՝ ուսուցիչները, ապրում են նյութական ծանր պայմաններում։ Նրանց միջին աշխատավարձը կազմում է ամսական 275 լիր³, այն ժամանակ, երբ միջին ընտանիքի ապրուստի անհրաժեշտ միջինումը 1958 թ. 709 լիր էր⁴։ Այդպիսի աշխատավարձով ուսուցիչները, իհարկե, չեն կարող քիչ թե շատ տանելի պայմաններ ստեղծել իրենց ընտանիքների համար։ Այդ պատճառով էլ նրանցից շատերը ստիպված են դասերից դուրս այլ գործերով պարապել կամ էլ՝ ընդհանրապես փոխել իրենց մասնագիտությունը։ «Ջումհուրիեթ» թերթի հաղորդմամբ Կոնյայեում 1958 թ. դեկտեմբերին 21 ուսուցիչներ ղաժր աշխատավարձի պատճառով թողնում են մանկավարժական աշխատանքը։

Ուսուցիչների աղքատ վիճակը անդրադառնում է պարապմունքների որակի վրա, ցածրանում են դեպի աշակերտներն ունեցած ակադեմիական պահանջները։ Դպրոցում տիրող այդ տենդենցը սուր քննադատության է ենթարկվել թուրքական մամուլի էջերում «Վաթան» թերթը, ընդգծելով տարրական դպրոցների աշակերտների պատրաստականության ցածր մակարդակը, առաջին հերթին դնում է դասավանդման մակարդակի, ապա՝ դեպի աշակերտներն ունենալիք պահանջկոտության բարձրացման հարցը⁵։ Ուսուցիչները իրենց դիտելիքների հարստացման ու բարձրացման համար տ՛լ ժամանակ տնեն, ո՛չ էլ միջոցներ։

Այսպիսով, աշխատավորների նյութական ծանր վիճակը, որը հետևանք է ամերիկյան իմպերիալիստներին ենթակա թուրքական կառավարող շրջանների հակաժողովրդական քաղաքականության, դպրոցական շենքերի և որակյալ ուսուցիչների սուր պահանջը խոչընդոտում են ընդհանուր նախնական կրթության իրականացումը։

¹ „Cümbüriyet“, 22.X.1958.

² Նույն տեղում, 28. VII. 1959:

³ „Hürriyet“, 14.1.1958.

⁴ Նույն տեղում, 16. XI, 1958. (1 լիրան=100 դուրուշի)։

⁵ „Vatan“, 10.XI.1956.

* * *

Թուրքիայում գոյութիւն ունի հանրակրթական միջնակարգ դպրոցի միասնական տիպ: Միջնակարգ դպրոցում ուսուցման տևողութիւնը 6 տարի է (3 տարի միջնակարգ միջնակարգ դպրոցում՝ առաջին աստիճան, և 3 տարի լիցեյում՝ երկրորդ աստիճան): Վերջին վեցերորդ դասարանը տրոհւում է երկու բաժանմունքի՝ լեզվական և բնական-մաթեմատիկական: Աստիճաններից ամեն մեկը կարող է գոյութիւն ունենալ իբրև ինքնուրույն դպրոց:

Միջնակարգ դպրոցի ուսուցման ծրագիրը բովանդակում է հանրակրթական, ինչպես նաև հատուկ մասնագիտական կրթութեան առարկաներ: Դպրոցում աղջիկները սովորում են երեխային խնամել, տնամարութիւն, կար ու ձև: Իսկ տղաները ծանոթանում են տեխնիկական և առևտրական առարկաներին¹: Լիցեյում մեծ ուշադրութիւն է դարձւում օտար լեզուների ուսումնասիրմանը: Միջնակարգ դպրոցն ավարտածները կարող են զբաղեցնել ցածր կարգի պաշտոններ, իսկ լիցեյն ավարտածները կարող են ընդունվել բարձրագույն դպրոցներ: 1958—1959 ուստարում Թուրքիայում գործում էին ընդամենը 503 միջնակարգ դպրոցներ²: Այս թիվը միանգամայն անբավարար է: Միայն Ստամբուլ քաղաքում 1956—1957 ուսումնական տարում միջնակարգ դպրոցների համար նախատեսված էր կառուցել 28 դպրոցական նոր շէնք (10 դասարաններով): Դրա համար պահանջւում էր 14 միլիոն լիր: Այնինչ, լուսավորութեան մինիստրութիւնը հատկացրեց ընդամենը 4,5 միլիոն լիր³: Ուրեմն պահանջւող 28-ի փոխարեն հնարավոր էր կառուցել միայն 9 դպրոցական շէնք: Դպրոցական շէնքերի պակասի հիմնական պատճառներից մեկն է, որ Թուրքիայում այժմ էլ միջնակարգ դպրոցի հասակ ունեցող 5 միլիոն երեխաներ չեն հաճախում դպրոց: Վիճակագրական տվյալներով 1955—1956 ուսումնական տարում սովորողների թիվը կազմում էր 138,461, իսկ 1956—1957 ուստարում 126,002 աշակերտ: Եթե տոկոսային հարաբերութեամբ վերցնենք, կտեսնենք, որ 1955 թ. 1950 թ. համեմատութեամբ 9,6%-ով պակաս դպրոցական հասակի երեխաներ են ընդգրկված դպրոցներում⁴: ՅՈՒՆԵՍԿՈ-ի վիճակագրական տվյալներով Թուրքիայում

¹ „Vatan“, 17.VIII.1958.

² „Vatan“, 6.XI.1959. Այս թիվ մեջ չեն մտնում ազգային փոքրամասնութիւնների (հույներ, հայեր, հրեաներ), ինչպես նաև օսմաներէլը՝ զըպ-քըցները:

³ „Cumhuriyet“, 29.VIII.1958.

⁴ „Vatan“, 14.X.1958.

միջնակարգ դպրոցի հասակ ունեցող երեխաներից դպրոցում ընդգրկվածների քանակը 10%-ից պակաս է¹։

Այս, առանց այն էլ փոքր թվից շատ մեծ է սովորողների մահումը՝ ինչպես տարրական, այնպես էլ միջնակարգ դպրոցում։ 1957 թ. դպրոցն ավարտել են 16,332 աշակերտ։ Դա կազմում է դպրոցն ընդունվածների ընդհանուր թվի 30%-ը²։ Այս հանգամանքը, առաջին հերթին, առնչվում է բնակչության մեծամասնության ցածր կենսամակարդակի հետ։

Թուրքական մամուլի էջերում ավելի հաճախակի են երևում հողմածներ միջնակարգ դպրոցներում ուսուցիչների պակասի մասին։ «Ջումհուրիեթ» թերթը գրում էր, որ Կավալ գյուղում (Սիվասի վիլայեթ) տեղական միջնակարգ դպրոցը մնացել էր առանց մի շարք առարկաներ դասավանդող ուսուցիչների, որի հետևանքով էլ 3 դասարաններում պարապմունքներ չեն անցկացվել³։ Ուսուցիչների անբավարար քանակի մասին էր գրում նաև «Հյուրիեթ» թերթը, որը նկատում էր, թե մի շարք առարկաների գծով ուսուցիչներ չլինելու պատճառով Ստամբուլում միայն մեկ օրում 200 ազատ ժամ էր մնացել⁴։

Միջնակարգ դպրոցների ուսուցիչների թիվը ներկայումս հասնում է 2995։ Դա նշանակում է, որ 100 աշակերտին ընկնում է 2,3 ուսուցիչ⁵։

«Ջումհուրիեթ» թերթի տեղեկությամբ, լուսավորության օրգանները բողոքում են միջնակարգ դպրոցների և լիցեյների սովորողների ցածր առաջադիմության մասին։ Որպես պատճառ՝ մատնանշվում է դասագրքերի և ուսուցիչների անբավարարությունը⁶, ուսուցման և դաստիարակման մեթոդների հետամնացությունը։ Սովորողը չի ստանում այնպիսի գիտելիքներ, որոնք կօգնեին նրան գործնական աշխատանքում՝ դպրոցն ավարտելուց հետո։

Միջանկյալ միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո սովորողն իրավունք ունի ընդունվել լիցեյ։ Ուսուցումը լիցեյում վճարովի է և դրա համար էլ այն մատչելի է միայն ոմեկոր ընտանիքների երեխաների համար։ Ծրկրում 1958—1959 թթ. կար 120 լիցեյ, որոն-

¹ «Коммунист», 17.II.1962.

² «Ulus», 16.I.1958.

³ «Cümhuriyet», 23.X.1958.

⁴ «Hürriyet», 18.XII.1957.

⁵ «Vatan», 14.X.1958.

⁶ «Forum», 1.III.1959, № 119, s. 20.

ցում սովորում էին 44643 աշակերտ¹։ Լիցեյների ցանցի ընդլայնումը ունեցել է հետևյալ պատկերը։ 1923 թ. եղել է 29 լիցեյ՝ 1241 աշակերտով, 1950 թ. 88 լիցեյ, որոնք տվել են 22,169 շրջափառվարտներ²։

Լիցեյները հիմնականում տեղաբաշխված են մեծ քաղաքներում։ Սրանց ուսումնական ծրագրերում մեծ տեղ է հատկացված օտար լեզուների ուսումնասիրությանը, ապա թուրքերեն լեզվին ու գրականությանը, քիմիային, ֆիզիկային, մաթեմատիկային, պատմությանն ու փիլիսոփայությանը։

* * *

Ներկորդ համաշխարհային պատերազմից հետո թուրքական դպրոցներում ուժեղացել է կրոնի ազդեցությունը։ Այդ տենդենցը հատկապես նկատելի է դարձել դեմոկրատական պարտիայի՝ իշխանության գլուխ անցնելուց հետո (1950)։ Դեռևս 1949 թ. Անկարայի համալսարանում բացվեց աստվածաբանական ֆակուլտետ։ Հաջորդ տարում խախտելով աշխարհիկ ուսուցման սկզբունքը, թուրքական կառավարությունը տարրական դպրոցներում մտցրեց կրոնի դասավանդում³։ Այժմ Թուրքիայում տարրական դպրոցների 99%-ը կորցրել է աշխարհիկ դպրոցի բնույթը⁴։

1956 թվականին կրոնի դասավանդում մտցվեց նաև միջնակարգ դպրոցներում ու լիցեյներում։ Կրոնի դասատուներ պատրաստելու նպատակով վերականգնվեցին իմամների դպրոցները։ Այժմ երկրում գործում են նման 16 դպրոցներ⁵։

Դպրոցներում կրոնական ուսուցման վերականգնումը թուրքական իշխանությունների հետադիմական քաղաքականության ուղղակի հետևանքն է։ Կրոնը հենց այն միջոցն է, որը երիտասարդությանը դաստիարակում է հնազանդության ոգով։ Պայքարելով առաջադիմական հայացքների տարածման դեմ, թուրքական կառավարող շրջանները դպրոցը դարձնում են տգիտության տարածման օջախ։

Խոսելով տաումնական հաստատություններում կրոնը իբրև առարկա մտցնելու նպատակների մասին, «The Islamic Review»

¹ „Zafer“, 7.XI.1957, և՛ „Vatan“, 6.XI.1959.

² „Ulus“, 1.X.1957, և՛ „Milli eğitim 1932—1952, İstatistik özeti“, № 7, s. 4.

³ Abul N. K. Sassani. Education in Turkey, Washington, 1952, p. 17.

⁴ „Коммунист“, 17.II.1962.

⁵ „The Islamic Review“. September, 1957, p. 15.

հանդեսը գրում էր, թե «...կրոնը հանդիսանում է թուրքական ռեսպուբլիկայում կոմունիստական գաղափարների թափանցման դեմ մղվող պայքարի լավագույն միջոցը»¹:

Իշխանության գլուխ կանգնած դեմոկրատական պարտիայի ծրագրում հատուկ տեղ էր տրված «գաղտնի կոմունիզմի» դեմ մղվող պայքարին: «Ակշամ» թերթը հայտնում էր, որ Մենդերեսի կառավարությունը մշակել էր երեք միլիոնների՝ լուսավորության, ազգային պաշտպանության և ներքին գործերի միլիոնների համագործակցության ծրագիր՝ առասպելական «գաղտնի կոմունիզմի» դեմ պայքարելու համար²:

Այդ նպատակով լուսավորության միլիոնների գծով նախատեսվում էր տարրական և միջնակարգ դպրոցներում շաբաթական 3 գասաժամ մտցնել՝ «կոմունիզմի վնասը» բացատրելու համար: Ամեն շաբաթ միլիոններում պետք է դպրոցներն ուղարկեին հատուկ բրոշյուրներ, որոնք շեշտեին, որ մահմեդական կրոնն ու թուրքական ազգային կառուցվածքը անհամատեղելի են կոմունիստական աշխարհի գաղափարների հետ:

Մենդերեսի կառավարությունը հայտարարեց, թե աճող սերնդի դաստիարակումը պետք է քաղաքականությունից, գաղափարական ամեն տեսակ ազդեցությունից դուրս լինի: Իրականում՝ «կյանքից դուրս, քաղաքականությունից դուրս դպրոցը սուտ և կեղծիք է»³: Վարագուրվելով «ապաքաղաքականության» բուրժուական թեորիայով, թուրքական իշխանությունները կրթության սիստեմի մեջ իրականում մեծ տեղ են հատկացրել գաղափարական դաստիարակությանը:

Թուրքական ղեկավարները ոչ մի միջոցից չեն խորշում երիտասարդությանը նացիոնալիզմի, պանթյուրքիզմի և շովինիզմի ոգով դաստիարակելու համար: Բուրժուազիայի գաղափարական զինանոցում առանձնահատուկ տեղ է տրվում ռասայական տեսություններին՝ որպես ամրող ընակչության և, մասնավորապես, երիտասարդության գաղափարական թմրեցման միջոցի: Սովորողներին այն միտքն է ներարկվում, թե թուրքերը բարձր ռասայի ազգ են: Ժողովրդա-ռեսպուբլիկական պարտիայի ծրագրում կրթության և դաստիարակության բնագավառի մասին ասված է, որ «թուրքական

¹ „The Islamic Review“. September, 1957, p. 14.

² „Akşam“, 6.1.1958.

³ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 28, էջ 93:

ազգը բարձր է մյուս ազգերից, նա ունի ժառանգաբար անցնող մի շարք առանձնահատուկ արժանիքներ¹:

Դաստիարակման նմանօրինակ գաղափարական բովանդակությունը ակնհայտ երևաց միջնակարգ դպրոցների և լիցեյների համար հրատարակված պատմության քառահատոր դասագրքում՝ «Թարիխում» (պատմություն): «Թարիխի» էջերում լայն արտացոլում են գտել բուրժուա-նացիոնալիստական, ռասիստական գաղափարներն ու ուսմունքները: Թուրքիայի պատմությունը, — ասված է «Թարիխում», — Թուրք ազգին բացատրում է, որ նրա ռասան իրենից ներկայացնում է աշխարհում բոլոր ժողովուրդներից և ազգերից ամենաազնվագույնն ու բարձրագույնը, որի խելքով և ընդունակություններով ցրվեց հարյուրամյակների ընթացքում մարդկության գլխին կուտակված սև ամպը:

Թուրքիայի պատմությունը Թուրք ազգին բացատրում է, որ նրա ռասան իր տաղանդով իրեն հավասարը չունի՝ ինչպես ռազմական գործում. պետության կառավարման և քաղաքականության մեջ, այնպես էլ զինության, գրականության, արվեստի. երաժշտության, ճարտարապետության և արվեստի մյուս բնագավառներում:

Թուրքիայի պատմությունը Թուրք ազգին բացատրում է, որ նրա ռասայի տիրապետությունը տարածվել է երկրագնդի բոլոր անկյուններում, ուր մարդը ոտք է դրել²:

Լիցեյների առաջին դասարանների համար հրատարակված Նիյազի Աքշիվի և էմին Օկտայի պատմության դասագրքում ասված է, թե Թուրքերը «...որոնք անցել են քարե և երկաթե դարաշրջանները, Միջին Ասիայից այլ վայրեր տեղափոխվելիս՝ տեղական ժողովուրդներին սովորեցրել են հողագործություն, կենդանիներին ընտելացնելը և մետաղամշակություն»³:

Ճգնելով ապացուցել, թե Թուրքերը ամենահին ժողովուրդն են, Թուրքական բուրժուական պատմաբանները, անտիկ աշխարհի պատմությունը սկսում են Թուրքիայի պատմությամբ: Ուրիշ ժողովուրդների և երկրների պատմությունը քիչ տեղ է տրվում կամ ամենեին տեղ չի տրվում, ինչպես օրինակ Ուրարտուն:

Լիցեյների 2-րդ դասարանների համար նախատեսված միջին դարերի պատմության դասագրքում պատմական նյութն այնպես է

¹ «Народный учитель», 1934, № 1, стр. 111.

² «Tarih», cilt. IV, s. 259.

³ Hiyazi Akşif, Emin Oktay, Tarih lise 1 sınıf, İstanbul, 1957, s. 18.

բաշխված, որ դարձյալ ամենամանրամասն կերպով շարադրվում է միայն Թուրքիայի պատմությունը¹։

Թուրքական ազգային-շովինիստները կաշվից դուրս են դալիս ապացուցելու, թե թուրքերը պատկանում են ոչ թե մոնղոլական, այլ արիական ռասային։ Թուրքական ռեակցիոն գաղափարախոսները ըստ երևույթին չեն ըմբռնում, որ «բարձր ռասայի» առասպելը երբեք ոչ մի դեր չի խաղացել և չի էլ խաղա ժողովուրդների սոցիալ-տնտեսական ու կուլտուրական զարգացման մեջ։ «Թարիխ» և մյուս դասագրքերի էջերում պատմական իրադարձությունների դնահատականը տրվում է իդեալիստական դիրքերից։

Հասարակական զարգացման պատմությունը թուրքական բուրժուական պատմաբանները հանգեցնում են պետական առանձին ղեկավարների գործունեությանը։ Ազգային-ազատագրական պայքարում թուրքական ժողովրդի հաղթանակը նրանք վերագրում են Քեմալի անձնական հատկություններին։

Մուստաֆա Քեմալի ջանքերի ու ձգտումների հանրագումարը, որի ղեկավարությամբ շատ ռազմաճակատներում կատարվում էր հարձակում և պահպանվում էր պաշտպանություն, կազմում է անկախությունը²։ Այլ կերպ ասած՝ եթե չլինեիր Քեմալը, չէր լինի նաև ազգային-ազատագրական պայքարը։

Դասագրքերում ժխտվում է երկրում բացի թուրքերից այլ ազգերի առկայությունը։

Երիտասարդության գաղափարական մշակումը ռեակցիոններները վարում են նաև սպորտային, բոյսկառության կազմակերպությունների միջոցով։ Բոյսկառության կազմակերպությունները («isciler» — հետապնդող) երիտասարդության խոշոր կազմակերպություններ են, որոնք ընդգրկում են նշանակալից թվով դպրոցներ։ Այդ կազմակերպության մեթոդները ընդօրինակված են «Հիտլերյուգենդ» ֆաշիստական հայտնի կազմակերպությունից։

Այդ կազմակերպությունը մեծ տեղ է տալիս ռազմական գործին։ Այժմ Թուրքիայի բոլոր միջնակարգ և բարձրագույն դպրոցներում պարտադիր ռազմական ուսուցում է մտցված։ Թուրքական կառավարող շրջանները ոչ մի միջոցից չեն խորշում՝ երիտասարդությանը շովինիստական ոգով դաստիարակելու համար։

¹ Hiyazi Akşif, Tarih lise II sınıf, Istanbul, 1956.

² „Tarih“, cilt, IV, s. 56.

Շարադրվածի հիման վրա կարելի է եզրակացնել, որ Թուրքիայում տարրական ու միջնակարգ կրթության գործը խոր ճգնաժամ է ապրում: Բնակչության 70%-ը անգրագետ է, դպրոցական հասակի երեխաների 40 տոկոսը չի կարող հաճախել դպրոց: Դպրոցների և ուսուցիչների անբավարարության հետևանքով այժմ երկրում լայն տարածում են գտել կրոնական դպրոցները, որոնք ուսուցումը վարում են ըստ դուրանի:

Թուրքիայի կառավարող շրջանները, որոնք երկիրը ներգրավել են ռազմա-քաղաքական ագրեսիվ բլոկների մեջ և նրա ամբողջ ներքին ու արտաքին քաղաքականությունը ենթարկել ամերիկյան իմպերիալիստներին, անտեսել են ժողովրդական կրթության գործը:

Ռազմական նպատակներով ծախսվում է բյուջեի մոտ 60%-ը, այն ժամանակ, երբ լուսավորությանը տրվում է բյուջետային հատկացումների 1,8%-ը միայն:

Թուրքական մամուլը վերջին ժամանակներս լայնորեն քննարկում է ժողովրդական կրթության հարցերը: Թուրքիայի այժմյան կառավարությունը նախապատրաստել է լուսավորության ծրագրի նոր նախագիծ, որի առաջնահերթ խնդիրն է լինում երկրում անգրագիտության վերացումը:

Р. Е. ДАНЕЛЯН

СОСТОЯНИЕ НАЧАЛЬНОГО И СРЕДНЕГО ОБРАЗОВАНИЯ В СОВРЕМЕННОЙ ТУРЦИИ

Резюме

В статье рассматривается состояние начального и среднего образования в современной Турции. На основании конкретных материалов, взятых в основном из турецкой прессы, автор освещает такие вопросы, как сущность реформ в области просвещения, программы обучения, острая нехватка школьных зданий и педагогических кадров и др.

Автор доказывает, что плачевное состояние начального и среднего образования в Турции—результат антинародной политики турецких правящих кругов, втянувших страну в агрессивные военно-политические блоки.